



ՀՀ բնապահպանության նախարարություն

**ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի
բանակցային գործընթացի վերջին զարգացումները և ազգային
հաղորդագրությունների ու երկամյա առաջընթացի զեկույցների
պատրաստման նոր պահանջները**

«ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրության և Երկամյա
առաջընթացի 2-րդ զեկույցի պատրաստում» ծրագրի մեկնարկային սեմինար

Ա. Գաբրիելյան

ՄԱԿ-ի ԿՓՇԿ ազգային համակարգող

*ՄԱԿ-ի նիստերի դահլիճ, Երևան
28 հոկտեմբերի 2016թ.*

Փարիզյան համաձայնագիր

2015թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 12-ը Փարիզում տեղի ունեցած ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) կողմ երկրների հերթական՝ 21-րդ համաժողովը ընդունեց իրավական ուժ ունեցող միջազգային համաձայնագիր՝ **«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի «Փարիզյան համաձայնագիր»**, ըստ որի աշխարհի բոլոր պետությունները ստանձնում են կլիմայի փոփոխության զսպմանը նպատակաուղղված հանձնառություններ:

Փարիզյան համաձայնագիր

- Ըստ համաձայնագրի զարգացող երկրների կողմից ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ սահմանափակման գործողությունները պետք է մեկնարկեն 2020թ.-ից:
- Բոլոր երկրների փոխհամաձայնությամբ որոշվել է զսպել մթնոլորտի գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական շրջանի (1850թ) ջերմաստիճանի նկատմամբ **2 աստիճանից ցածր մակարդակում՝ միաժամանակ ձգտելով չգերազանցել 1.5 աստիճանը:**

Փարիզյան համաձայնագրի վավերացման գործընթացը

- Ս.թ. հոկտեմբերի 5-ին Փարիզյան համաձայնագիրը վավերացրած երկրների թիվը հասավ 75-ի, որոնց գումարային արտանետումները գերազանցեցին աշխարհի գումարային արտանետումների 55 %-ը՝ կազմելով 56,75%:
- Այսպիսով, ըստ արձանագրությամբ սահմանված ժամանակացույցի, Փարիզյան համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 30 օրից՝ 2016 թ-ի նոյեմբերի 4-ին այն երկրների համար, որոնք վավերացրել են համաձայնագիրը:

Հայաստանի Հանրապետության անելիքը համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո

- Հայաստանի Հանրապետությունը առայժմ զրկված է ձայնի իրավունքից ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի շրջանակում, քանի որ դեռ չի վավերացնել այն:
- Հայաստանը պետք է շտապի վավերացնել համաձայնագիրը, որպեսզի դուրս չմնա համաձայնագրի շրջանակներում ձևավորվող իրականացման մեխանիզմների շուրջ ընթացող բանակցություններից
- Դա վերաբերում է նաև Կիոտոյի արձանագրության Դոհայի ուղղմանը, որի վավերացման փաստաթղթերի փաթեթը մեկ տարուց ավել գտնվում է ՀՀ Ազգային ժողովում

Մինչ վավերացումը մասնակցության հնարավոր ուղիներն ու մեխանիզմները

COP-21-ում ընդունած 1/CP.21 որոշմամբ սահմանված է՝ **“IV.Մինչ 2020թ ժամանակաշրջանը գործողությունների ակտիվացում”** (IV.Активизация действий в период до 2020 года) առաջարկը, ինչպես նաև այդ գործողությունների իրականացմանը նպատակառուղիված՝ **“Կողմ չհանդիսացող շահագրգռված շրջանակների”** (V.Заинтересованные круги, не являющиеся Сторонами) մասնակցության վերաբերյալ դրույթները

Ազգային հաղորդագրությունների ներկայացման իրավական շրջանակները

- Ազգային հաղորդագրությունների ներկայացման պահանջն ամրագրված է Կոնվենցիայի Հոդված 4. կետ 1ա և 1բ և Հոդված 12-ում:
- Հաղորդագրության և զեկույցների մշակման ուղեցույցները հաստատվում են Կողմերի համաժողովի կողմից: Հավելված 1-ի մեջ չներառված երկրների համար ներկայումս գործում են 17/CP8 և 2/CP17 որոշումներով հաստատված ուղեցույցները:
- Ի կատարումն ՄԱԿ ԿՓՇԿ պարտավորությունների ՀՀ ներկայացրել է I, II և III ազգային հաղորդագրությունները (1998թ., 2010թ., 2015թ.) և 2016թ. Առաջին երկամյա առաջընթացի զեկույցը:
- Ներկայումս ՀՀ կառավարության կողմից հաստատման փուլում է Կոնվենցիայի իրականացման միջոցառումների հնգամյա ծրագիրը, որում նախատեսված է նաև ազգային զեկույցների մշակման և ներկայացման գործողությունը:

Ազգային հաղորդագրությունների ու երկամյա առաջընթացի զեկույցների պատրաստման նոր պահանջները

- Անհրաժեշտ է ընդունել, որ կլիմայի փոփոխության կոնվենցիայի դրույթների կատարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել է հստակ, իրավական ուժ ունեցող հայեցակարգ, որն արտահայտված է Հայաստանի Հանրապետության INDC-ում (առաջիկա՝ NDC-ում):
- ԿՓ 4-րդ և ապագա ազգային հաղորդագրությունները պետք է պարունակեն տեղեկություններ NDC-ի կատարման վերաբերյալ, այդ թվում՝ տեխնոլոգիաների զարգացման ու փոխանցմանը և նոր ձևավորված ու ձևավորվող ֆինանսական մեխանիզմների մասին:
- Նպատակահարմար պետք է համարել 4ԱՀ-ում տեղ հատկացնել նաև կոնվենցիայի շրջանակում ձևավորվող “կորուստներ ու վնասներ” Վարչապյան մեխանիզմի գործընթացից բխող Հայաստանի խնդիրներին:

Ազգային հաղորդագրությունների ու երկամյա առաջընթացի զեկույցների պատրաստման նոր պահանջները

4-րդ ԱՅ ու երկրորդ երկամյա զեկույցի պատրաստումը պետք է դիտարկվի որպես Փարիզյան համաձայնագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառությունների կատարման ու հաշվետվայնության նախապատրաստական գործընթաց, որի ընթացքում ի թիվս այլ գործընթացների պետք է ձևավորվեն այն բոլոր մեխանիզմները, որոնք թույլ կտան Հայաստանին պատշաճ կերպով իրականացնել իր հանձնառությունները, մասնավորապես, **չափողականության, հաշվետվայնության ու հավաստագրման (MRV)** համակարգի գործարկումը

Ազգային հաղորդագրությունների ու երկամյա առաջընթացի զեկույցների պատրաստման նոր պահանջները

- Ի նկատի ունենալով կլիմայի փոփոխության հիմնախնդրի բազմաճյուղային բնույթն ու առաջիկա հաշվետվայնության պահանջը կարիք կլինի զարգացնել ու հստակեցնել միջգերատեսչական համագործակցությունն ու համակարգումը, քաղաքացիական հասարակության մոտիվացված մասնակցությունը և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը:
- Կարիք կլինի ձևավորել կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանը ուղղակի ու անուղղակի նպատակաուղղված տեղական ու միջազգային ծրագրերի դիտանցի ու գնահատման համաձայնեցված համակարգ

Ազգային հաղորդագրությունների ու երկամյա առաջընթացի զեկույցների պատրաստման նոր պահանջները

- Ի նկատի ունենալով կլիմայի փոփոխության իրականացման հնգամյա գործողությունների ծրագիրը՝ (ՀՀ կառավարության 04.11.2011թ. No1594 որոշում) ու 2017-2021թթ. Նախատեսվող ծրագիրը, 4-րդ ԱՀ ու երկրորդ երկամյա զեկույցի պատրաստումը կուղեկցվի նաև ՀՀ կառավարության հիշատակված որոշումների դրույթներով:
- Ծրագիրը կաջակցի Հայաստանի NDC-ում ամրագրված գործողությունների/ներդրումների մասով կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության մանրամասնեցված պլանների մշակմանը, ինչպես նաև այլ բնապահպանական կոնվենցիաների հետ խաչվող խնդիրների բացահայտմանն ու համաձայնեցված գործողությունների ձևավորմանը:

Շնորհակալություն

aramgabrielyan@yahoo.com

aram@nature.am